№ 32 Փետրվարի 21 (Մարտի 5) 1881 Փետրվարի 21 (Մարտի 5) № 32

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Անանունագրութիւն չեմում են ոչ մի գրվածի
Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տան օրերից)

Ձեռագրութիւն չեղածները չեմ տարուց։

Ձեռագրատուներին համար վճարում են
երեսները յատի 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիրքը և թղթերը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ ախտերայից։ Նամակ խմբագրին։ Նեղ-ջան լուրեր—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա։ Սպանիոյ դիւրքը—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խաչի բէկ։

ԳԻՒՂԸ ԵՒ ՔԱՂԱՔԸ

—

Ընդհակառակ Հայ գիւղերը առանձնակ առաքինութեամբ ապրելով գեղմնացիների կամ մալականների գիւղերի հարևանութեամբ, այնու ամենայնիւ ոչինչ օրինակ չեն վեր առնում իրանց հարևաններից թէ հողի մշակութեան առելի կատարելագործված ձևերի կողմից, թէ բնակարանների առելի յարմար շինութեան կողմից, թէ այս կամ այն արդիւնաբերութեան ու առհասարակ կեանքի բարեկեցութեան կողմից։ Վերմանացին կամ մալականը գիւղական յարմար տներ ունեն, բուսնամեն իրանց հողերի, այգիների, բոստանների մէջ այնպիսի արգիլներ, որոնց ազդողները այս կամ այն տեղում Հայ գիւղացին անհեռակայելի էր համարում։

Բայց Հայ գիւղացին զարձեալ շարունակում է ապրել գետնափոր, անառողջ, կեղտոտ խրճիթների մէջ, իր անասունների հետ միասին և շարունակում է մշակել հողը այն նախապատական ձևով, որով մշակում էին նրա պապերը, շարունակում է արդիւնաբերել միմիայն այն արդիւնքները, որ արդիւնաբերում էին նրա նախնիները դարերից առաջ։

Այդ երևոյթը երկու պէտառ պատճառներն ունի։ Նախ՝ որ Հայ գիւղը երկար ժամանակ ենթարկված լինելով թիւրքի իրաւունքի (тіуаное право) իշխանութեանը, տնտեսական անաջող դրութեան մէջ էր գտնուում և մասամբ մինչև այժմ էլ գտնուում է, երկրորդ՝ որ Հայ գիւղական տարրի ամենատարր, թարմ ոյժերը անընդհատ հոսում են գէպի քաղաքը և այլ և այլ երկիր չեն վերադառնում գիւղը։

Պարսից տիրապետութեան ժամանակներին այժմեան ռուսական Այսաստանում գտնուել թիւրքի իրաւունքը։ Կառավարութիւնը իր այս կամ այն պաշտօնեային փոխանակ ռոճիկ տալու պետական գանձից, յատկացնում էր մի գիւղ, որի հարկերի մի մասը ինքն էր առնում, իսկ միւս մասը տեղական վարչութիւնն էր պատռում պաշտօնեային։ Հայց տեսակ իրաւունքը ժամանակաւորապէս էր տրվում պաշտօնեային պարտից կառավարութեան կողմից, իսկ վերջը գիւղը կրկին արքունի գիւղ էր դառնում, կամ կրկին ժամանակաւորապէս տրվում էր մի այլ պաշտօնեայի։

Երբ Թուսաստանը նուաճեց պարսկական Այսաստանի այդ մասը, թիւրքի իրաւունք ունեցող կալուածատէրերը, այլ և այլ թէ Հայ և թէ թիւրք խոնները, կարողացան ապացուցանել ռուսաց կառավարութեանը, որ իրանք այս կամ այն գիւղը ոչ թէ ժամանակաւորապէս են տիրապետել, այլ որ գիւղը իրանցն է և որ գիւղացիները նրանց պարտաւոր Հարկատուներն են։ Այդպիսով միայն թիւրքի իրաւունք ունեցող կալուածատէրերի վրա գիւղերը վերջնականապէս Հաստատվեցան մեր կառավարութեան կողմից և մեր Հայոց և թիւրք գիւղերը ստիպվեցան կրկնակի Հարկեր վճարել մի կողմից պետական գանձարանին, միւս կողմից կալուածատիրոջ։ Այդ տեսակ նեղ տնտեսական դրութեան մէջ գժուար էր մեր գիւղերի Համար տնտեսապէս առաջ գարպանալ և գարգացման մէջ մրցել մի քանի պետական Հարկ վճարող գերմանացի գօլոնիստների և մալականների Հետ։ Այսպէսով որ Հայ գիւղացին միայն ծուլութենից և անհոգութենից չէ որ աղքատ է, որ եթէ նա տնտեսապէս աջող դրութեան մէջ է, նա բարեկարգում է իր դրութիւնը, Հարստանում, գետնափոր խրճիթներից դուրս է գալիս և լաւ տներ շինում՝ կարող է այն իրողութիւնը լինել, որ արքունի Հողերի վրա գտնվող Հայ գիւղերը Երեւանեան նահանգում անհամեմատ աւելի Հարուստ են, քան թէ կալուածատէրերի, նոյն իսկ Հայ և թիւրք կալուածատէրերի Հողերի վրա շինված գիւղերը։ Արքունի Հողի վրա եղած Հայ գիւղը մի Հարկ է վճարում միայն, այն է պետական Հարկը, մինչդեռ կալուածատէրերի գիւղերը բացի պետական Հարկից, վճարում են և տասանորդ և ուրիշ տեսակ տուրքեր։ Ինչպէս կալուածատէրերի գիւղերում, նոյնպէս և արքունի գիւղերում գիւղացին ենթարկվում է ամեն տեսակ պարտաւորութեանց, որ գիւղացին կրում է կալուածատիրոջ Հանդէպ։ Ինչպէս կալուածատէրերի գիւղերում, նոյնպէս և արքունի գիւղերում գիւղացին ենթարկվում է ամեն տեսակ պարտաւորութեանց, որ գիւղացին կրում է կալուածատիրոջ Հանդէպ։ Ինչպէս կալուածատէրերի գիւղերում, նոյնպէս և արքունի գիւղերում գիւղացին ենթարկվում է ամեն տեսակ պարտաւորութեանց, որ գիւղացին կրում է կալուածատիրոջ Հանդէպ։ Ինչպէս կալուածատէրերի գիւղերում, նոյնպէս և արքունի գիւղերում գիւղացին ենթարկվում է ամեն տեսակ պարտաւորութեանց, որ գիւղացին կրում է կալուածատիրոջ Հանդէպ։ Ինչպէս կալուածատէրերի գիւղերում, նոյնպէս և արքունի գիւղերում գիւղացին ենթարկվում է ամեն տեսակ պարտաւորութեանց, որ գիւղացին կրում է կալուածատիրոջ Հանդէպ։

ԳԱԽԻԹ ԲԷԿ

ԳԱՍՏԱԿԱՆ Վ Է Գ

(1722—1728)

—

Դրից ծառաներից, սպասաւորներից ուրախութեան ազազակները բոլորովին խլացնում էին վիրերի խռովարարները։ Նրանց սեղանը ուրիշ նման էր և գինին աւելի առատ։ Նրանք չուռով իրանց համար գուռնայ ու սազանդարներ բերել տուին, ակսին ուժել, երգել և պար դալ։ Ուռաների այդ չանգուռն մրցութիւնը, կարծես, գրգռեց Բայինդուր իշխանի նախանձը, որը սեղանից վեր բարձրացաւ, ձայն տալով.

—Պար, պար, Բայինդուր իշխանը պար է ուզում։

Գորից չանձնաւոր «բահմանդլիճի» արտասցող ձայնը բուռական էր տան կնիկների ուշադրութիւնը գրաւելու գուռբանութեան այդ եղանակի վրա, որ հէնց իրանց ցանկութիւնն էր, որի մասին մի քիչ ուժեղութեան էին սպասում։ Թիւրան ժպտալով մտանցաւ, վեր առնց պատից կախ տուած գայրան, իսկ Գարօն ցած բերից նրան տեղից գոչ ընկած խեղդվէն քրմուհիները, մինը մեծ, միւսը փոքր, որոնք կապած էին միմեանց սիրուհիներով (*)։ Նա առնց քրմուհիները մի փոքրիկ ազգկայ ձևացը, որը գրկելով, կանգնեց նրա հանդէպ։ Աչուռն էլ իր պարկապցուկը սարքելով, կանգնեց նրանց մօտ։ Նրա չարժութեան խումբը կազմեցաւ, ինչպէս էին պատրաստել։ Այդ մրցութեան Յօսիկն, փէփէլն և Նինան չարժեցան միմեանց մօտ, և իւրաքանչիւրը անհամբերութեամբ սպասում էր իր հերթին, որ սկսէ պարը։ Մի անանձ ուրախութիւն, որ բոլոր ազնախոհական պատրաստութեամբ փայլում էր այդ քիչհաճերիկի պէս անմեղ, մանկահասակ ազիւիների դէմքի վրա։ Նրանք գեռ հիւթերի գալուց շատ առաջ մի առանձին խըռնաճաք էին տարել իրանց զարդասրանքի վրա և ամեն մէկը հագել էր իր պահեստից ինչ որ նոր էր, ինչ որ լաւն էր։ Այժմ կազմ և պատրաստ, ինում էր նրանց թաչկոտել, թաչկոտել քէկոզ մինչև լոյս։

—Առաջ դու սկսիր, գալակս, ասաց Բայինդուր իշխանը, բռնելով ամենակրտսեր քրոջ, Նինոյի, ձեռքից և կանգնեցնելով նրան մէջտեղում։

Նինան չարժվեցաւ։ Թինան իր գալար մատներով սկսեց ածել փոքրիկ բուժմներով զարդարած գոյիրան, իսկ Գարօն փայտակայ բարակ ձողերով սկսեց ոչընչացնել խեղդվէն քրմուհիները։ Այդուն էլ գոռ էլ տալիս իր պարկապցուկին, բոլոր հիւթերը նրաժչութեան հզօրագին համեմատ սկսեցին ծափ տալ։

Նինան պարում էր։ Նրա բոլոր անդամները չարժողութեան մէջ էին, և կարծես, մինը միւսի հետ մրցութեան էին անում, թէ որը աւելի արագ, թէ որը աւելի աքանչելի կերպով կարող է պատասխաններ գործել։ Յոգնած Նինոյից յետոյ ընկաւ փէփէլն և ապա Յօսիկն։ Երկու միւս քոյրերի պարը ոչնչով չէր զանազանվում առաջինից, միայն դրանք աւելի ծափահարութիւններ առացան գլխաւորապէս այն պատճառով, որ իրանց պատասխանների և քոնիչների մէջ ցոյց տուեցին գարմանալի ճարպկութիւններ։

Երբ ընդհանուր գուարճութիւնը աւելի տաքացաւ, պարի մէջ խառնվեցան և հիւրերից մի քանիսը։ Նախ սկսեցին Յօսիկն և Գաթիկօն, երկու վրացի ազնուականները միասին։ Դա խիստ պար չէր։ Նրա մէջ չը կար ոչ վայելչութիւն և ոչ կիրթ ճաշակ.—գա լեզգիների գրգռված ջղերի տրդիւնաբերութիւնն էր, երբ լեռնական մարդը իր ուրախութեան, իր հոգու ցնծութիւնը արտայայտում է վայրենի, անկանոն շարժուածքներով և կատաղի քոխրդներով զարկ։ Այդ իսկ պատճառով այդ պարը կոչվում էր լեզգինա պար, ազատարդների մէջ նա գեռ պահպանել էր իր վայրենի բնաւորութիւնը, իսկ կնիկների մէջ բուսական մեզմացած էր։

Բարեբաղդաբար խառնակութիւնը բոլորովին ընդհանուր դարձաւ, մանաւանդ այն ժամանակ, երբ սպասաւորների խումբը դրացի սենեակից իրանց գուռնայով նրա մասն։ Գուռանները խառնվեցան իրանց տէրերի հետ և սկսեցին միասին պարել։ Այդ մրցողին Թինան և Գարօն, որ մինչև այժմ աջում էին գարիսպի ու քմծուկի վրա, իրանց երաժչտական գործիքները յանձնեցին Աֆիրօին և փէփէլին, իրանք էլ միացան պարողների հետ։ Ջուռնայի ձայնը, գարիսպի ու քմծուկների աղմկոտութը, ծափահարութիւնն ուրախ, արբած բազմութիւնն խառնաձայն ազազակը, բազմաթիւ ոտների տոփիւնը,—բոլորը միախառնվելով, ներկայացնում էին մի վայրենի, խառնաչփոթ քաոս։ Վրաց քաղաւրի ատամանին գուարճանում էր...

Այդ խառնակութիւնն ժամանակ ոչ ոք չէր կարողացել նկատել, որ մի գինուոն մարդ Ներա էր մտել, և միանալով ծառաների հետ, առանդով ծափ էր տալիս և բոլոր ուժով ազազակում էր։ Բայց Նա չը կարողացաւ երկար անյայտ մնալ Բայինդուր իշխանի ուժգին ուշադրութիւնից, որը մանաւանդ Նրան, մի տատիկ բամբռչայ (*) խփելց գլխին, ասելով.

—Բարեւ, Սագուլ, բարեւ։—Դէմքին մանեա, երբ նկար։

Իշխանի ծանր բամբռչայից չշնած, չչկտած Սագուլը չը կարողացաւ խոսոն պատասխանել, որովհետև Նրա առաջին մտքով գտակը իշխանի ձեռքի տատիկ գորչից, իր սովորական տեղը քաղնելով, այժմ իջել, հասել էր մինչև Նրա բնչաքը, բոլորովին ծածկելով քէ աչքերը և քէ

(*) Բամբռչայ ժողովրդական լեզուով նշանակում է հանկերով զարկել։

չէկ մարտքը։ Նա փոքր ինչ ուշքի գալով, ըստացից գտակը վեր քաշել, որ տեսնէ, թէ ով էր իր վնաս այսպիսի կոպիտ հանաք անողը, որ Նրա հանճարա պատասխանէ,—այդ միջոցին իշխանի երկրորդ բամբռչան իջաւ Նրա գլխի վրա և փոքրիկ գլուխը բոլորովին թաղվեցաւ ահագին գտակի մէջ, որ այժմ հասել էր մինչև Սագուլի աչքերը։

—Ցնա լաւ, քեզ եմ ասում, պատառ ազուէս, երբ նկար, կրկնեց իշխանը իր հարցմունքը։

—Տօ, հէր օրհնած, մի քոզ ասուր աչքերս բաց անեմ, երեսից մեկի տամ, բարով, հազար բարով ասեմ, քէֆիդ հարցնեմ, կեանդ ի հարկէ կասեմ, թէ երբ նկայ։— Ի՞նչ նա չար հրեչտակի նման հագիս առնում, պատասխանեց Սագուլը գտակը ուղղելով, որը այժմ այն ստացման չափ նստել էր, որ էլ իր սովորական տեղում չէր կանգնում։

—Լդ անիծված գտակը ինչու այդպէս գժվեցաւ... գժգոհութեամբ գրմնչում էր նա, անդադար ուղղելով գտակը, և երբ տեսաւ, նայ չը կայ, ջիրից հանեց իր քիթի ընգարձակ ազլուխը (որը մի և նոյն ժամանակ նրա սրբիչ էր) գրեց գլխի վրա, որ գտակի ծաւալը փոքրանայ։ Իսկ այդ բացը երկար չը տեսեց։ Իշխանի բռասակցութիւնը Սագուլի հետ նրա վրա գարձրին բոլոր հիւրերի ուշադրութիւնը, որոնք քողնելով իրանց երգն ու պարը, հաւաքվեցան նրա չուրջը, և իւրաքանչիւրը չը խնայից հնարել Բայինդուր իշխանի բարի օրինակին, մի-մի բամբռչայ Նրա գլխին տալով. սիրելութեամբ ազդուել Նրան։ Այժմ գտակը այն ստացման չափ էր, որ ոչ միայն քնքի ազլուխը, այլ նմիկ մի փոքրիկ բոքա նս իր գլխի վրա գնելու լինէր, գտակը գոչունակ մեծ կը գար։

—Աւաւ նն, Սագուլ, ինչու չնս մնծանում, խոսում էր նա ինքն իրան, ուշադրութեամբ գնդելով գտակը, մի գուցէ պատռված լինէր.— էլ ոչտեղից մնծանայ Սագուլը, ամեն անգամ, երբ այդպիսի բամբռչաներ նմ ուտում, բոլոր

իսկ կալուածատէրերի գիւղերը կրկնակի հարկ են վճարում։ Թէև վերջին ժամանակները կալուածատէրերի թիւոյի իրաւունքը սկզբունքով ոչնչացրած է, բայց մեր կալուածատէրերը զարձեալ վերցնում են իրանց գիւղացիներից այլ և այլ բ ն ա կ ա ն հարկեր։

Երկրորդ պատճառը որ հայ գիւղը անշարժ է մնում և ոչ մի կողմից առաջադիմութիւն չէ անում այն է, որ հայ գիւղացիների ամենաընդունակ ոյժերը թողնում են գիւղը և գնակվում են քաղաքների մէջ։ Գիւղացին ձգտում է դէպի քաղաքը, այնտեղ վաճառականութեամբ և մանրավաճառութեամբ պարապելու համար։ Գիւղացու որդին երբ հայոց հոգևոր, կամ պետական միջնակարգ դպրոցում իր ուսումը աւարտել է, բայց մանաւանդ երբ այդ գիւղացին կարողացել է բարձրագոյն ուսում ստանալ, նա այլ ևս իրան գիւղացի չէ համարում և այլ ևս չէ վերադառնում գիւղը, արհամարհելով բահը ձեռք վեր առնել և հողի մշակութիւն անել։

Դրա հետևանքը ի՞նչ է լինում. նախ՝ գիւղական տարրից խլվում են այդպիսով նրա թարմ, ինտելիգէնտ, մտաւորապէս աւելի զարգացած ոյժերը, գիւղացու մէջ այդպիսով երբէք չեն կարող մնացած լինել, նոյն իսկ ուսում ստացած գիւղացիների ձեռքով աշխատանքի աւելի կատարելագործված ձևերը, կենցաղավարութեան աւելի մաքրակեղ եղանակը, գիւղը այդպիսով զուրկ լինելով նոր հոսանքից, միշտ անշարժ է մնում, բացի սորանից ուսեալ գիւղացին զրկված լինելով ինտելիգենցիայի պաշտպանող գիւղական տարրից, անպաշտպան է մնում մանր պաշտօնեաների այլ և այլ կամայականութիւնների դէմ։

Որքա՜ն բան կը լինէր եթէ մի ստանաւալ, մի զասեդատել, մի պրիստավ, գալով մի գիւղ և զանազան վարչական պահանջներ դնելով գիւղացիներին, հանդիպէր գիւղում մի ուսուցչին, որ եթէ ոչ համալսարանական, գոնէ միջնակարգ ուսում ստացած մարդ լինէր։ Այն ժամանակ պաշտօնեան ստիպված կը լինէր յարգանքով վերաբերվել դէպի գիւղացիների իրաւունքները, կամայականութիւն և զեղծումներ չը գործել, այլ իր պահանջների օրինական խիստ սահմաններից չը դուրս գալ։

Այո, դա մեծ դժբաղդութիւն է որ մեր հայ գիւղացին հէնց որ քիչ ուսում է ստացել, նա այլ ևս իրան գիւղացի չէ համարում և չէ վերադառնում գիւղը, բայց ուզում է դեր խաղալ քաղաքում։ Իսկ գիւղը մնում է միշտ անշարժ, նրա մէջ մնում է միմիայն գիւղական ազգաբնակութեան ստէտ, խաւար տարրը։

Բայց որքան արդիւնաւոր է ուսում ստացած գ ի ւ ղ ա ց ու քաղաքի ինտելիգենցիայի մէջ խաղացած դերը, — այդ մենք մի այլ անգամ կը տեսնենք։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

փետրվարի 8-ին

Անցեալ տարվայ դեկտեմբեր ամսին սկսվեցաւ տեղիս հայ-կաթոլիկ եկեղեցու հոգաբարձութեան հաշւի վերաքննութիւնը։ Արդէն վեցերորդ տարին էր, որ մնացած էր հաշիւը անուշադիր մեր ժողովրդի ազդումեան, անհետևողութեան և անհոգութեան պատճառով։ Թէպէտ այս վեց տարվայ ընթացքում ժողովուրդը մի քանի անգամ պահանջել էր հաշիւ, բայց յարգելի հոգաբարձուները միշտ յետ էին ձգել նրա վերաքննութիւնը, զոհ դնելով զանազան խորամանկութիւններ։

Վերջապէս անցեալ տարի ժողովրդից շատերը վճռաբար պահանջեց հաշիւը։ Պ. Ա. Եփրիկեանց և նրա օգնական Ն. Ղորղանեանց հոգաբարձուները այս անգամին էլ աշխատում էին յետաձգել հաշիւ տալը։ Ի՞նչ էր պատճառը,—ոչ ոքի յայտնի չէր… Նրանք նշանակում են հաշուատուութեան համար մի օր, ժողովուրդը հաւաքվում է ուսումնարանում վեց տարվայ հաշիւը մաքրելու համար, —յանկարծ իմացվում է որ պ. Եփրիկեանց Աղէքսանդրապոլ է գնացել ժամանակ գործերով.—Չեմ կարող հաշիւ տալ, ասում է Ն. Ղորղանեանց, քանի որ իմ ընկերս այստեղ չէ…—Այս անգամ խեղճ ժողովուրդը, որ հաշիւ իր բան ու գործը թողած, եկել էր հաշուատուութեան համար, ստիպված է յետ դառնալ։ Դալիս է Աղէքսանդրապոլից Եփրիկեանց, խոստանում է մի այլ նշանակել որ հաշիւ տալ։ Դարձեալ հաւաքվում է ժողովուրդը մեծ յուսով, որ իր քրտինքով աշխատած և փառքաստիբոլուրի համար տուած փողի հաշիւը լսէ։ Ցաւն այն է, որ այս անգամին հոգաբարձուի օգնական Ղորղանեանցն է գնացել Թիֆլիս, իսկ Եփրիկեանց մենակ հաշիւ տալ չէ կարող. ժողովուրդը երկրին դառնում է տուն, դառնում է իր բան ու գործին.

Վերջապէս հաշուատուութեան օրը, ժողովրդի պահանջողութեամբ, որ ինդիրքով դիմել էր Թիֆլիս, նշանակվում է։ Որովհետև ժողովրդի մեծ մասը անտեղեակ էին հաշուապահութեան կանոններից, ժողովրդի կողմից նորից էին նշանակվում հոգևոր կառավարութեան անդամները։

Հաշիւը սկսվում է։ Դարձնում էք մատեանի մի երեսը. նրա վրա գտնում էք աւերված և ջնջված թուանշաններ և նորից վրէն գրած։ Հարցնում էք պատճառը.—«Սխալվեցայ» լինում է պատասխանը։ Դարձնում էք մի ուրիշ թերթ, տեսնում էք ցուցակում գրված հետևեալ տողերը. «Մի մեղւյսեան, ընծայեաց Ն. Հ-եանց, որ արժէր 7 րուբլ, ծախեցինք 7 րուբլիով»։ Նոյն մեղւյսեանը ընծայողը ներկայ գտնվելով վկայում է որ մեղւյսեանը գնված էր ոչ թէ 7, այլ 24 րուբլիով։

Միթէ այդ տեսակ անիրաւութիւններ կարելի է անել եկեղեցու դէմ և ինչ իրաւունքով հոգաբարձուները ծախում էին եկեղեցու ընծաները առանց ժողովրդի գիտակցութեան….

Վերջապէս յայտնվեցաւ որ Ա. Եփրիկեանցի և Ն. Ղորղանեանցի շնորհով մեր եկեղեցին 6 տարվայ ընթացքում պակասել ունեցաւ 72 րուբլ, այն էլ ոչ թէ զուտ գումար, այլ պարտ մնացին յարգելի հոգաբարձուները և, ի հարկէ, հաշիւը վերջացնելուն պէս, ուրախութեամբ ընդունեցան իրանց պաշտօնից հրաժարվելը, համոզելով՝ ի հարկէ առաջարկեան, բայց թող իմանան պարոնները, որ եթէ հաշուատուները սիամիտ մարդիկ չը լինէին, այլ բանիրուն հաշուողներ, և հաշիւը տեսնէին այնպէս, ինչպէս հարկ է, հոգաբարձուները այն ժամանակ ոչ թէ 72 րուբլ պարտ կը մնային մեզ, բայց գուցէ տաս, քսան անգամ աւելի….

Խղճմտանքից զարմանալով մինչև այժմ Ախալցխայի հայ-կաթոլիկների թէ եկեղեցին և թէ ուսումնարանը դեռ ևս չեն ունեցել մի հոգաբարձու, որ առանց ժողովրդի կողմից անէծք և առանց պարտքի հաշիւ տար։ Վերոյիշեալ երկու հոգաբարձուներից առաջ եղած հոգաբարձուն էլ 500 րուբլ պարտ մնաց, որ մինչև այժմ եկեղեցին չէ ստացել լիովին։ Որքան ուրիշ իրանց գրպանն են դնում….

Հայ-Հառան

մի թեթև կարճանում է, կարծես, զետին է մտնում..

—Այնպէս մանի, որ էլ դուրս չը գայ. որ քո սև երեսը մարդիկ չը տեսնեն, գոչեց, վրա թռչեց Բայինդուր իշխանը, և սիրով բռնելով նրա ձեռքից, նստեցրեց տախտի վրա։

Սաքուլը այժմ իր չարաղուշակ զատկը դրեց տակը ու այնպէս նստեց, ոչ թէ փափկութեան համար, այլ աւելի այն նախազգուշութեամբ, չիցէ թէ նրա հետ մի նոր վտանգ ևս պատահի։ Նա այնքան երկիւղ չունէր իր գլխի մասին, որ սովորած էր բանտուչաների, որքան իր զատկի մասին, եթէ զուարճասէր հիւրերը իրանց ձեռքերի ծանրութիւնը միւս անգամ էլ փորձէին նրա վրա։

Բայց Սաքուլի խորամանկութիւնը չարժեց Բայինդուր իշխանի ծիծաղը, որը դառնալով դէպի հիւրերը, ասաց.

—Այժմ ես հաւատում եմ, բոլորովին հաւատում եմ այն առակին, որ պատմում են այդ անպիտանի մասին։

Սաքուլի մասին տասնի ձև ստացած անցքի պատմութիւնը բոլոր հիւրերին յայտնի լինելով, իշխանը հարկաւոր չը համարեց նորից կրկնել, բայց որովհետև մեր ընթերցողին անծանօթ է այդ անցքը, մենք կը պատմենք, գլխաւորապէս այն նպատակով, որ այդ փոքրիկ պատմութեան մէջ նկարվում են Սաքուլի բնաւորութեան յատկութիւններից մի քանի խոշոր գծեր։

Մի անգամ Սաքուլը գարնան սկսի գնար վրաց թագաւորի տանը. ամառանոց, անտառային էր. փողոցներում թանձր ցեխ էր կանգնած. տեղ-տեղ ջուրը բոլորովին լճացել էր։ Որպէս զի իր, առանց դրան ևս մաշված, տրեխները չը փչանան, Սաքուլը աւելի բարւոք համարեց տրեխները հանել, ձեռքում բռնել և այնպէս մերկ ու բոբիկ ոտներով գնալ։ Այդ աւելի յարմար է, մտածեց Սաքուլը, որովհետև այսպիսով տրեխները մաքուր կը մնան, իսկ երբ կը հասնեմ թագաւորի տանը, այն ժամանակ ոտներիս ցեխը կը լուանամ, կրկին տրեխներս կը հագնեմ և այնպէս ներս կը մտնեմ։ Այդ կարգադրութիւնը վատ չէր լինի, եթէ ճանապարհին մի դժբախտութիւն չը պատահէր։ Երբ նա շտապով վազում էր, յանկարծ մի մեխի կտոր խրվեցաւ նրա մերկ ոտքի մէջ։ Ցաւը այնքան սաստիկ եղաւ, որ Սաքուլին ուշաթափ տուն տարան։ Երբ մեխի կտորը դուրս հանեցին, նա ուշքի եկաւ, և նայելով վէրքից հոսող արիւնին, ինքն իրան մխիթարեց այդ խօսքերով. «լաւ էր, որ տրեխներս հագիս չէին, թէ չէ, այդ անիծված մեխը կպոկ էր և տրեխս ծակէր…»

Այդ նշանաւոր մէտաղի համար ոտքի ծակվելը փոյթ չէր, միայն թէ տրեխները անվնաս մնային։

Սաքուլը ազգով հայ էր, բնիկ Թիֆլիսեցի. նա ոչ տուն ունէր, ոչ կին ունէր, ոչ զաւակներ և ոչ հեռաւոր կամ մօտաւոր ազգականներ։ Վրաստանում պարապվում էր վաշխառութեամբ։ Վրաց ազնուականներից ոչ մէկը չը կար, որ Սաքուլին պարտական չը լինէր։ Ամեն մարդ թքում էր նրան, ծրում էր նրան, ծեծում էր նրան, բայց դեռ ոչ ոք մինչև այն օր այնքան քաջութիւն չէր ունեցել, որ կարողանար Սաքուլի անզգամ տոկոսները չը վճարել։ «Սաքուլը քարից փող կը դուրս բերէ»—այդ էր ամենքի կարծիքը նրա մասին։ Վրաց ազնուականների ընդարձակ կալուածների արդիւնաբերութիւնը հազիւ բաւականանում էր լրացնել Սաքուլի տոկոսները։

Նա, ինչպէս վերևում յիշեցինք, մի փոքրիկ մարդ էր, տարիքը անցած քառսունից։ Նրա կարճլիկ ոտները պատած արխալուխը, կարճ, աբրեխները, գտակը, իրանց ժամանակագրութեամբ, գուցէ քառորդ դարով միայն պակաս լինէին նրա տարիքի ամբողջ թւից.—և իր հոգւասար այդ պահպանելի հնութիւնը ինքը Սաքուլը միշտ մեծ պատկառանքով յիշում էր։ Եթէ բոլորովին սխալ ևս համարէք ժողովրդական նախապաշարմունքը թէ կարճիր-չիկամաց մարդիկը ազատորդու զարժ չեն լինում, այլ զետնի տակիցն են դուրս գալիս,—բայց Սաքուլի վերաբերութեամբ այդ կարծիքը պէտք էր բոլորովին ուղիղ համարել, մանաւանդ երբ ի նկատի առնենք, որ նրա երեսի կաշին ստուերի պէս ծակծկած ու ծաղկոտած էր։ Նրա նման մի չորացած ու միայն գծուծ էր գտնել ազգաբնակների մէջ, այլ խաւարի ծնունդների մէջ անգամ հազիւ թէ կը պատահէր մի այնպիսի զարչելի արարած։

Վերջին ժամանակներում Սաքուլը աւելի ընդարձակել իր գործունէութիւնը և բացի վաշխառութիւնից պարապվում էր գերեվաճառութեամբ։ Լեզգիների և կովկասեան այլ լեռնաբնակների անզդոր յարձակումները Վրաստանի վրա բաց արին նրա առջև առևտուրի ու վաստակի մի նոր ասպարէզ։ Լեռնաբնակները գերիներ էին տանում Վրաստանից, ի հարկէ, բռնելով միշտ նշանաւոր ընտանիքներից։ Սաքուլը յանձն էր առնում վերադարձնել գերիներին, ստիպելով պայման կապելով նրանց ազգականների հետ, թէ կը ստանայ այսքան գումար։ Յետոյ նա գնում էր Դաղստան, և գնելով յետ էր բերում գերիներին, ստանում էր խոստացած գումարը։ Նոյն առևտուրը նա կատարում էր և գերված լեզգիների վերաբերութեամբ, եթէ պատահմամբ ընկնում էին վրացիների ձեռքը։ Լեռնաբնակների բոլոր ցեղապետների հետ ծանօթ էր Սաքուլը, և ամեն անգամ նրանց տանը գնալիս, նրանց կանանց համար ընծաներ էր տանում, և ամեն տեղ սիրալի ընդունելութիւն էր գտնում։ Գերեվարները, Սաքուլի գալուստը լսելով, իսկոյն հաւաքվում էին նրա շուրջը, սկսվում էր առևտուրը։ Տարակոյս չը կայ, առևտրութիւնը վերջանում էր միշտ յօգուտ խորամանկ գերեվաճառի, որի համար մեծ աշխատութիւն պէտք չէր միամիտ լեռնցուն խաբելու համար։ Այսուամենայնիւ, Սաքուլը այնքան ընդարձակ վարկ էր ստացել Դաղստանում և լեռնաբնակները այն աստիճան հաւատարմութիւն ունէին դէպի նրա ազնւութիւնը, որ շատ անգամ գերիներին յանձնում էին նրան առանց փող ստանալու, համոզված լինելով, որ Սաքուլը իր խօսքը յարգող մարդ է, կը տանէ և փողերը յետոյ կ' հասցնէ։ Եւ իրաւ, Սաքուլը այդ դէպքերում յարգում էր իր տուած խօսքը, և երբէք չէր պատահել, որ նա որ և իցէ դէպքում զրկած լինէր իր յարաբերութիւնների մէջ լեռնաբնակների վստահութեանը։ «Շատ ուտելը քիչ ուտելուց էլ կը զրկէ մարդուն», անդադար կրկնում էր նա թուրքի առածը.—եթէ մի անգամ բռնեմ ու նրանց փողերը չը վերադարձնեմ, այնուհետև ես մինչև մահ պէտք է զրկեմ ինձ իմ փառաւոր առևտրից։ Այդ դատողութիւնից պարզ յայտնի էր, որ Սաքուլը ուղղութեան, հաւատարմութեան և ճշմարտի վրա չէր նայում նրանց բարոյական կողմից, այլ բոլորովին գործնական կէտից էր ընդունում պարտաճանաչութեան պահանջը։

Այն օրը մարդն էր, որին այնպէս անհրաժեշտ կերպով ընդունեց Բայինդուր իշխանը, որ նոր էր վերադարձել Դաղստանից, բերելով իր հետ գերիների մի ամբողջ քարաւան, և այժմ տուն, անվրդով կերպով նստած էր իր զատկի վրա, և բարեխիղճ ժպիտով ընդունում էր բէկի ազատ հիւրերի զուռն կատակները։ Բայց նրա պատմութիւնը թէ իր ճանապարհորդութեան և թէ իր վերադարձի մասին մնաց անկատար, որովհետև բէկի յոգնած հիւրերը փոքր առ փոքր սկսեցին հեռանալ, ազնիւալի անհետալ բոլորովին զուարճաւելու և ամեն տեղ տիրեց խաղաղութիւն.

Այնուհետև բէկը երկար, միայնակ նստած Սաքուլի հետ խօսում էին։ Ի՞նչ գործ ունէր Վրաստանի առաջին պետական մարդը այդ գերեվաճառի հետ։

(Կը շարունակվի)